Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ձյուդոյի և կարատեի դահլիճի վերանորոգման ծրագրի ավարտական հանդիսավոր արարողությունը

2026 թվականի հոկտեմբերի 30-ին Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում տեղի ունեցավ նույն ինստիտուտի ձյուդոյի և կարատեի դահլիճի վերանորոգման ծրագրի ավարտական հանդիսավոր արարողությունը՝ իրականացված Ճապոնիայի կառավարության «Grassroots» մշակութային ծրագրերի դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն ԱՈԿԻ Յուտական, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական պարոն Արման Անդրիկյանը, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետականինստիտուտի ռեկտոր պարոն Տիգրան Սիմոնյանը, ինչպես նաև ինստիտուտի ղեկավար կազմը, ուսանողներ և հյուրեր:

Ճապոնիայի կողմից տրամադրվել է 91,088 ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհ՝ ձյուդոյի և կարատեի դահլիճը վերակառուցելու և կահավորելու նպատակով: Վերակառուցումից և վերանորոգումից հետո դահլիճի մակերեսն ընդլայնվել է, ինչը հնարավորություն կտա ավելի շատ մարդու մարզվել բարելավված պայմաններում:

Արարողությունը մեկնարկեց դեսպան Առկիի և պարոն Սիմոնյանի կողմից ժապավենը կտրելով, ինչով պաշտոնապես ազդարարվեց վերանորոգված մարզադահլիճի բացումը: Ծրագիրը շարունակվեց ձյուդոյի և կարատեի մարզիկների ցուցադրական ելույթներով, որոնք ներկայացրին իրենց հմտություններն ու կարգապահությունը:

Ելույթներից հետո շնորհավորական խոսքով հանդես եկան պարոն Սիմոնյանը և դեսպան Առկին: Պարոն Սիմոնյանը նշեց, որ նոր դահլիճը հնարավորություն կտա առավել արդյունավետ կերպով կազմակերպելու կրթական գործընթացը: Նա ընդգծեց, որ այս իրադարձությունը ոչ միայն կրթական կամուրջ է Հայաստանի և Ճապոնիայի համար, այլև կարող է նպաստել փոխադարձ հետաքրքրությունների ու համագործակցության զարգացմանը:

Դեսպան Առկին ընդգծեց, որ ճապոներենում ձյուդոյի կամ կարատեի դահլիճը կոչվում է «դոջո» (DOJO): «Դոջո» բառը բաղկացած է երկու մասից՝ «դո» (do), որը նշանակում է «ուղի», և «ջո» (jo)՝ «վայր»: Այսպիսով, «դոջո»-ն «Ուղու վայր» է: Այն ոչ միայն մարտարվեստի հնարքներ սովորելու, այլև ֆիզիկապես ու մտավորապես զարգանալու վայր է: Նա հույս հայտնեց, որ այս «դոջո»-ն կդառնա ևս մեկ կամուրջ երկու երկրների միջև և կնպաստի ապագայում նրանց բարեկամության ամրապնդմանը:



Դահլիճի մուտքը (պարոն Անդրիկյանը, դեսպան Աոկին և ռեկտոր Սիմոնյանը)



Խմբային նկար մարզիկների հետ



Կարատեի մարզիկների ելույթը



Դեսպան Աոկին մարզիկների հետ



Մարզիկի կարատեի ելույթը



Դեսպան Աոկին և պարոն Սիմոնյանը